Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՀՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ

ՀՏԴ 941 (479.25):325
ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)
Շ 973

Գիտաժողովը նվիրվում է
Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին

Տպագրվում է գիտաժողովի խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
Արտակ Մաղալյան

Գիտաժողովի ծրագրային կոմիտե՝
Արամ Սիմոնյան – ԵՊՀ ռեկտոր, **Վլադիմիր Բաբխուդարյան** – ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, **Բաբկեն Հարությունյան** – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, **Աշոտ Մելքոնյան** – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, **Ռուբեն Սաֆրաստյան** – ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, **Աբրահամ Աղասյան** – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, **Պավել Ավետիսյան** – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Շ 973 ՇՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ: Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր: – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, – 370 էջ + 1 էջ ներդիր:

ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)

ISBN 978-5-8080-0715-4
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2007

ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԵՊՀ

ՇՈՒՇԵՅԻ ԳԵՆԵՐԱԼ-ԱԴՅՈՒՏԱՆՏԸ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԼԱԶԱՐՅԱՆ

1837 թ. Ռուսաստանում իշխանուհի Մադաթովա-Սաբլուկովայի ջանքերով լույս տեսավ «Իշխան Մադաթովի կյանքն ու գործունեությունը» գիրքը՝ Ա. Խոմյակովի, Ի. Բակունինի և Մ. Կոցեբուի հեղինակությամբ: Առաջին երկուսը եղել են Վ. Մադաթովի համիարզները, իսկ երրորդը նրա հետ է եղել Դաղստանում՝ լեռնականների դեմ պատերազմի ընթացքում: Գիրքն այնքան հետաքրքրություն էր առաջացրել ընթերցողների շրջանում, որ 1863-ին ունեցավ իր երկրորդ հրատարակությունը: Ի դեպ, գրքի հայերեն հրատարակությունը կատարվել է Շուշիում[1]:

Տասնամյակներ անց ռուս պատմաբան, գեներալ-լեյտենանտ Վասիլի Պոտտոն հանդես եկավ մեծածավալ մեկ այլ աշխատությամբ՝ «Գեներալ-ադյուտանտ Իվան Դավիդովիչ Լազարև»: Գեղեցիկ ձևավորված այս գիրքը լույս տեսավ Թիֆլիսում 1900 թ.: Վերնագիրն արդեն հուշում է, որ այն ամբողջովին նվիրված է հայազգի նշանավոր զորավար, ծնունդով շուշեցի գեներալ Հովհաննես Լազարյանի կյանքին ու գործունեությանը. «Գեներալ-ադյուտանտ Իվան Լազարևը պատկանում է նշանավոր այն զորապետերի թվին,- գրում է Վ. Պոտտոն,- որոնք ակամայից իրենց վրա են սևեռում ժամանակակիցների ուշադրությունը և հետո միայն իրենց անունը հանձնում պատմությանը՝ օրինակ ծառայելու ապագա սերունդներին»[2]:

[1] Կեանք գեներալ-լէյտենանտ կնեազ Մատաթովին, Շուշի, 1870:
[2] *В. Потто*, Генерал-адъютант Иван Давидович Лазарев, Тифлис, 1900, с. 5.

Վ. Պոտտոյի այս գրքի պատմագիտական արժեքն այն է, որ Հովհաննես Լազարյանի հերոսական կյանքի և ռազմական փառքի նկարագրությունները հեղինակը կատարում է Կովկասում խմորվող կարևորագույն իրադարձություններին զուգահեռ: Ընթերցողը, միաժամանակ, հստակ պատկերացում է կազմում 18-րդ դարի վերջի և 19-րդ դարի պատմական կարևոր անցքերի մասին: Ռուս պատմաբանն այստեղ մանրամասն ներկայացնում է Ղարաբաղում տիրող իրավիճակը 16-րդ դարից սկսած, անդրադառնում է հայ մելիքություններին, ռուս-պարսկական պատերազմում Շուշիի՝ 1826 թ. հերոսական պաշտպանությանը և այլ հարցերի:

Ուստի կարծում ենք, որ հայրենի պատմագիտությունը մեծ պարտք ունի հայ նշանավոր զորապետերի կյանքն ու գործունեությունը պատմագիտական պատշաճ լուսաբանության արժանացնելու խնդրում: Եվ, ընդհանրապես, հայ ռազմական պատմագիտությունը, ունենալով մարտական բազմադարյան ավանդույթներ, առաջին քայլերն է անում միայն, ինչը պատմաբանների և ռազմագետների ներկայիս մեր ներուժի պայմաններում արդարացված չէ: Ներկա հրապարակումն առաջին հերթին այդ նպատակամղումն ունի. ներկայացնել հայազգի գեներալներից մեկին, որն իր անունը փառավոր կերպով է ամրագրել ռուսական ռազմական պատմության մեջ: «Կովկասյան գործիչների շարքում Իվան Դավիդովիչ Լազարևը պատկանում է այն քչերի թվին, որի անունը կարդալիս ապագա սերունդը պիտի կանգ առնի ակամա զարմանքով և խորը հարգանքով: Նա հազվադեպ ծնունդ էր, փայլուն և մեծագույն տաղանդ, որն ամենուրեք, որտեղ որ լիներ, իրենից հետո թողել է փառավոր հիշատակ: ...Լազարևը չուներ ոչ անվանի գերդաստան, ոչ հարստություն, ոչ կապեր վերևներում... Անսովոր միտք և հսկայական ունակություններ, որի առջև ակամայից խոնարհվում էին բոլորը՝ ահա նրա ուղու և պանծալի ծառայական կարիերայի միակ շարժիչը... Կովկասի

ժողովուրդների մոտ նրա խոսքը օրենքի ուժ ուներ»,– գրում է Վ. Պոտտոն[3]:

Հովհաննես Լազարյանը ծնվել է 1820 թ. Շուշիում, ղարաբաղյան սովորական ընտանիքներից մեկում: Երիտասարդ հասակում եղել է արհեստավոր, որոնցով այդքան հարուստ և հռչակված էր քաղաքը: 19 տարեկանից սկսվում է Հովհաննեսի մարտական կենսագրությունը, որը նրան պիտի տաներ դեպի ռազմական փառքի ամենաբարձր դափնիները: 1839 թ. նա ծառայության է մտնում նշանավոր Շիրվանյան հետևակային գնդում, որը Կովկասյան կորպուսի փառաբանված հրամանատար Ա. Երմոլովն անվանում էր հռոմեական տասներորդ լեգեոնը: Հենց այստեղ էլ Հովհաննես Լազարյանը ստանում է իր մարտական առաջին պարգևը՝ Գեորգիևյան խաչը:

Ռազմական ձիրքով օժտված երիտասարդը չէր կարող դուրս մնալ ռուս հրամանատարների ուշադրությունից. արդեն 22 տարեկանում Հովհաննես Լազարյանը ստանում է սպայի աստիճան, և քիչ անց նրան է վստահվում շիրվանյան գնդի հրացանակիրների հինգերորդ գումարտակի հրամանատարությունը. «Նա բարի և սիրելի ընկեր էր, մարտական լավ սպա և այդքանը միայն,– գրում է Պոտտոն:– Ոչ ոք նրանում չէր տեսնում ապագա ռազմական փառքի այն տեղը, որը պետք է գբաղեցներ նա Կովկասի պատմության մեջ՝ իր անունը անմահացնելով Գունիբի և Կարսի նշանավոր օպերացիաներում: Նրան սպասում էր միայն պատահականությունը, որն էլ իրեն սպասեցնել չտվեց»[4]: Դա 1848-ին էր, Ախտա ամրոցի տակ, երբ կովկասյան լեռնականների առաջնորդ Շամիլն իր բազմահազարանոց ջոկատով փորձում էր գրավել անառիկ համարվող այս բերդը, որի պաշտպանությունը հանձնարարված էր դաղստանյան ջոկատին, որի կազմում կռվում էր նաև Հ. Լազարյանը: Ի դեպ, չմոռանանք նշել, որ այս ջոկատի

[3] Братская помощь пострадавшим в Турции армянам, 2-издание, М., 1898, с. 288.

[4] Նույն տեղում, էջ 289:

հրամանատարն էր մեր մեկ այլ հայրենակից, փառաբանված գեներալ Մովսես Արղության-Դոլգորուկին: Ռուսական բանակի վիճակը բավականին ծանրացավ. գրոհը, որ պիտի բացեր ճանապարհը դեպի պաշարված բերդը, կարծես թե չէր ստացվում. այդ ժամանակ Լազարևը վերցնում է 7-րդ գումարտակը և նետվում գրոհի: Այս քաջասրտությունը այնքան տպավորիչ է լինում, որ մյուս գումարտակները ևս, անտեսելով դիմահար կրակը, նետվում են միասնական գրոհի, որն ավարտվում է հաջողությամբ: Շամիլականները նահանջում են, և բերդը մնում է անառիկ. այդ ժամանակ էլ ջոկատի հրամանատար Արղությանը առաջին անգամ նկատում է վիրավորված իր հայրենակցին և նրան երաշխավորում ռազմական բարձրագույն հրամանատարության առջև:

Շատ չանցած՝ նրան է վստահվում Մեխտուլիի խանության կառավարումը: Լազարյանի համար խանության կառավարումը հեշտ գործ չէր. լեռնականների համար քաղաքացիական և ռազմական կյանքի սահմաններ չկային. ողջ երկրամասն ապրում էր նույն մարտական լարվածության մեջ: Սակայն հայազգի կառավարիչը իրեն հատուկ սառնասրտությամբ կարողանում էր «լեզու գտնել» ռազմաշունչ այդ բնակչության հետ: Եվ եթե առանձին դեպքերում Լազարևը փոքրինչ խիստ էր, սակայն մշտապես պահպանում էր ազնվությունն ու արդարամտությունը: Եվ որքան մարդկային որակների պիտի տիրապետեր այստեղի բարքերին օտար կառավարիչը, որը, իր տրամադրության տակ չունենալով կանոնավոր զորքեր, միայն փոքրաքանակ միլիցիայով կարողանում էր սանձել տեղացի և հարևան ավարառու ցեղերի հարձակումները: Հովհաննես Լազարյանին դա հաջողվեց. «Շնորհիվ իր խորաթափանցության և քաջածանոթ լեռնականների խառնվածքին,- գրում է Պոտտոն,– նա գիտեր այն ամենը, ինչը հարկավոր էր իր հարևանների մտադրությունը կռահելու համար... Նրա անունն անգամ լեռնականներին սարսափազ-

դու էր դարձել հարևան անհանգիստ աուլների համար»[5]: Եվ որպեսզի ավելի հեշտացներ տեղացիների հետ հարաբերվելու իր գործը, Լազարյանը կատարելության հասցրեց թուրքերենին տիրապետումը, որը մեկ անգամ չէ, որ հետագայում զարմանքի առիթ տվեց թուրքական բարձրաստիճան հրամանատարներին. չմոռանանք հիշատակել, որ երբ 1877 թ. նոյեմբերին ընկավ Կարսը, Լազարյանն անձամբ բանակցեց Կարսի թուրք պարետի հետ, և ինչպես նշում էին ականատեսները, վերջինս զարմացել էր Լազարյանի՝ թուրքերենի իմացությունից: Այդուհանդերձ, «նրան մշտապես կարելի էր տեսնել լեռնականների շրջապատում, որոնք հաճախ էին գալիս նրա մոտ խորհուրդ հարցնելու և ընդհանրապես զրույցի բռնվելու համար»[6]: Նրա համբավը շուտով հասավ նաև իրեն՝ Շամիլին, և այն դերը, որ նա ունեցավ լեռնականների վերջին իմամի հանձնման մեջ, միմիայն խոսում է լեռնականների շրջանում նրա բացառիկ վստահության մասին:

1859 թ. օգոստոսին, երբ ընկավ Շամիլի վերջին հանգրվան Գունիբը, Հովհաննես Լազարյանը նրան գերողների մեջ էր: Ի դեպ, քչերին է հայտնի, որ Շամիլի գերեվարումը իրականացրել են մեր երեք հայրենակիցները՝ Լորիս Մելիքովը, Արշակ Տեր-Ղուկասովը և Հովհաննես Լազարյանը: Ուշագրավ է այն հանգամանքը, որ երբ Շամիլը հասկանում է, որ կռվելն անիմաստ է, հարցնում է ռուսներին, թե այստեղ է արդյոք գնդապետ Լազարյանը և եթե այստեղ է, ապա թող ինքը միայն գա բանակցությունների: Փաստորեն իմամը ցանկացել էր Լազարյանից լսել իրեն առաջարկվող պայմանները և նույնիսկ խորհուրդ հարցնել նրանից: Ի դեպ, նույն կարծիքին էր նաև Կովկասի կառավարիչ իշխան Բարյատինսկին և քաջատեղյակ լեռնականների շրջանում Լազարյանի ունեցած մեծ համբավին՝ նրան է հանձնարարում Շամիլի հետ բանակցելու

[5] Նույն տեղում, էջ 290:
[6] Նույն տեղում, էջ 291:

առաքելությունը: Միաժամանակ, ռուսական ճամբարում բոլորն էլ գիտակցում էին, թե որքան դժվար էր լինելու այդ գործը և որքան ռիսկ և վտանգավորություն կար դրանում: Գնդապետ Լազարյանը հանձնարարությունը ընդունում է միանգամից և պատրաստակամ. նա Շամիլի ճամբար է գնում միայնակ՝ առանց ուղեկիցների: Հայազգի գնդապետը մյուրիդներին ողջունում է արևելյան ձևով և նույնիսկ ցույց չի տալիս, թե նրանց մեջ ճանաչում է Շամիլին, թեպետ առանձնակի դժվարություն չէր այդ ամբոխի մեջ նկատել ձիուն նստած և մռայլ տեսք ընդունած Դաղստանի ահեղ տիրակալին: Մի փոքր լռությունից հետո, դիմելով Շամիլին, Լազարյանն ասում է. «Շամի՛լ, ողջ աշխարհին է հայտնի քո քաջության և փառքի մասին, քանի կանգուն են այս լեռները: Ենթարկվի՛ր ճակատագրին և հանձնվի՛ր ռուսաց տիրակալի բարեհաճությանը. դրանով դու կփրկես մնացյալներին, որոնք քեզ հավատարիմ մնացին քո տխրության պահերին: Ցո՛ւյց տուր, որ դու մեծ ես ինչպես երջանիկ, այնպես էլ տխրության ժամանակ...»[7]: Շամիլը սկզբում այնպիսի պայմաններ է դնում, որին սակայն Լազարևը լիազորված չէր պատասխանելու և բանակցությունների ընթացքն այնպես է փոխում, որ Շամիլը ստիպված ընդունում է նրա առաջարկած պայմանները, և գերված Շամիլին բերում են Կովկասի կառավարչի վրանը: Մի պահ նույնիսկ բանակցությունների խափանման լուրջ պատճառ կար և միայն Լազարյանի դիվանագիտական ճկունության շնորհիվ այն անցանկալի ավարտ չունեցավ: Ի դեպ, կառավարչի և իմամի թարգմանչի դերը ստանձնել էր գնդապետ Հովհաննես Լազարյանը:

Նույն՝ 1859-ին, Հովհաննես Լազարյանն արդեն գեներալ-մայորի ուսադիրներով ղեկավարում էր այն նույն դաղստանյան ջոկատը, որը երկու տասնյակ տարի շարունակ կռվում էր Շամիլի դեմ: Ջոկատի հրամանատարության հետ

[7] Նույն տեղում, էջ 292:

մեկտեղ Լազարյանը ստանձնում է նաև Դաղստանի օկրուգի կառավարումը: Չմոռանանք նշել նաև, որ Շամիլը հեռանալուց առաջ վերջին անգամ տեսակցում է Լազարյանին, տեղի մյուրիդներին հրամայում է անխոս կատարել Լազարյանի հրահանգները և աջակից լինել նրան: Հետաքրքրական է, որ Լազարևը իր համար կենտրոն էր ընտրել նույն Գունիբ աուլը...

1866 թ. Լազարյանը ստացավ գեներալ-լեյտենանտի զինվորական աստիճան. ռազմական բազմաթիվ փառքերի արժանացած շուշեցին դրան լիովին արժանի էր: Լազարյանը ստանձնեց հետևակային 21-րդ դիվիզիայի հրամանատարությունը:

Հ. Լազարյանի ռազմական կենսագրության ամենափառավոր էջն, անշուշտ, 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմն էր: Լազարևի առաջին մարտը այդ պատերազմում Ալաջայի բարձունքներում տեղի ունեցած կատաղի ճակատամարտն էր, որի ժամանակ իր տրամադրության տակ ունեցած ջոկատով թափանցեց թուրքերի թիկունք և փակեց վերջիններիս ճանապարհը դեպի Կարս: 1877 թ. հոկտեմբերի 2-3-ի այս հանդուգն ռազմական օպերացիան Լազարևին բերեց Գեորգիի 3-րդ աստիճանի շքանշան: Սակայն հայազգի զորապետի հաղթության դափնին այդ պատերազմում Կարսի բերդի գրավման նշանավոր օպերացիան էր: «Երբ ռազմական խորհրդում դրվեց Կարսի գրավման հարցը, մասնակիցների ձայները բաժանվեցին: Շատերն արտահայտվեցին այն բանի օգտին,- գրում է Պոտտոն,- որ նկատի ունենալով մոտալուտ ձմեռը՝ հարկավոր է զորքերը տեղավորել տներում, իսկ Կարսի պաշարումը հետաձգել մինչև հաջորդ տարի: Մյուսներն, ընդհակառակը, պաշտպանեցին այն տեսակետը, որ դա միայն հնարավորություն կտա թուրքերին ուշքի գալ նախորդ պարտություններից և ամրանալ Կարսում՝ ավելի զորեղացած: Բոլորից ջերմեռանդ վերջին տարբերակը պնդում էր Իվան Լազարևը՝ գտնելով, որ Կարսի գրավումը հնարավոր է և պետք է կատարվի այժմ և ուրիշ ավելի նպաստավոր պահ մեզ համար

այլևս չի ներկայանալու: Նրա համոզվածությունն ու խոսքի եռանդը,- շարունակում է հեղինակը,- հաղթող դարձավ մյուս տեսակետների հանդեպ և Կարսի գրավման հարցը համարվեց լուծված»[8]:

Բերենք հայ զորապետին բնութագրող մի քանի քաղվածքներ ևս. «Նախատեսվող գիշերային գրոհի գաղափարը ռազմական խորհրդում բուռն վեճերի առիթ դարձավ,- գրում է նա,- բայց ի վերջո բոլորն էլ համաձայնվեցին Լազարևի եզրակացության հետ, որը գիշերային գրոհը համարում էր հաջողության գլխավոր երաշխիքը»[9]: «Նոյեմբերի 3-ի գիշերը գեներալները հավաքվեցին Լազարևի վրանում: Զրույցը մոտակա գրոհի մասին էր, և Լազարևի մեջ վերջնականապես հաստատվեց այն համոզմունքը, որ անհրաժեշտ է օգտվել ընթացիկ ցրտերից և լուսնային գիշերներից, որպես գրոհին նպաստող հանգամանքներ: ...Զինվորների մարտական ոգին բարձրացնելու համար... նա թույլտվություն խնդրեց անձամբ հանձնելու Գեորգիևյան խաչերը ստորին անձնակազմին, որոնք աչքի էին ընկել մարտերում և չէին հասցրել ստանալ իրենց պարգևները»[10]: Եվ վերջինը՝ «Գնդակները թռչում էին ամենուր... հանկարծ Լազարևի ետևում իրարանցում սկսվեց. շատերն իջան իրենց թամբերից: Լազարևը կռահեց, թե բանն ինչն է, սակայն նույնիսկ ետ չշրջվեց և միայն հարցրեց՝ ով է վիրավորվել: -Պորուչիկ Լազարևը,- պատասխանեցին նրան երերացող ձայնով: Հեռացնե՛լ,- կարճ պատասխանեց գեներալը: Նրա աչքի նույնիսկ մեկ մկանն անգամ չշարժվեց սիրելի հարազատի (պորուչիկ Լազարևը նրա եղբոր՝ Բաբաջանի որդին էր՝ Հ.Հ) վիրավորվելու լուրը լսելիս»[11]:

---

[8] *В. Поттто*, Генерал-адъютант Иван Давидович Лазарев, с. 327–328.

[9] Նույն տեղում, էջ 334:

[10] Նույն տեղում:

[11] Նույն տեղում:

Ռուս-թուրքական պատերազմի ավարտին Հովհաննես Լազարյանը համարվում էր ժամանակի ամենատաղանդավոր զորապետերից մեկը. հայազգի գեներալ-լեյտենանտն այս անգամ արժանանում է ռուսական ռազմական բարձրագույն պարգևներից մեկին՝ Գեորգիի 2-րդ աստիճանի մեծ խաչով շքանշանի, իսկ 1878 թ., երբ արդեն պատերազմն ավարտված էր, Պետերբուրգում Գեորգիևյան տոնակատարության ժամանակ արժանացավ գեներալ-ադյուտանտի կոչման: Նույն թվականին էլ Հովհաննես Լազարյանը նշանակվում է կովկասյան 2-րդ կորպուսի հրամանատար, իսկ մեկ տարի անց՝ 1879 թ.՝ Լորիս Մելիքովից հետո արդեն ողջ կորպուսի հրամանատարն էր: Նրան էին վստահվում հրամանատարական ամենաբարձր պատիվները:

Նոր էր ավարտվել ռուս-թուրքական պատերազմը, երբ ռուսական արքունիքը զորապետերին առաջադրեց ռազմական նոր խնդիր. օրակարգում էր Միջին Ասիայի գրավումը: Մինչ այդ Միջին Ասիայում ռուսական երկու ռազմարշավ ավարտվել էր անհաջող: Ի դեպ, ռազմական առաջին օպերացիան գլխավորել է մեր մեկ այլ հայրենակից, որի անունը մեզանում քչերին է հայտնի. գնդապետ Մարկոզովը (Մարկոսյան): Ռազմական այս արշավի նախապատրաստությունն ու իրականացումը դրվում են գեներալ-ադյուտանտ Հովհաննես Լազարյանի վրա: Ռուսական բարձրաստիճան զինվորականության միահամուռ կարծիքով ընտրությունը միանգամայն ճիշտ էր. «Այս ընտրությունը,– գրում է Պոտտոն,– կատարվել էր ամենայն պատասխանատվությամբ և արդեն կարելի էր չկասկածել նրա հաջողությանը, քանի որ Լազարևի հուժկու անունը այնքան ազդու էր ասիացիների շրջանում, և վերջապես նրա վճռական պահվածքն ու խոսքը այնքան մեծ տպավորություն գործեցին տեղացիների վրա, որ նրան միանգամից կոչեցին Բատիր-Սարդար (Բատիր՝ գլխավոր հրամանատար – Հ. Հ.):

Սակայն ճակատագիրը թույլ չտվեց ավարտել սկսված ռազմական նախապատրաստությունը. շուշեցի գեներալ-ադյուտանտը իր մահկանացուն կնքեց հեռավոր թուրքեստանյան տափաստաններում: Քաջարի ու երկաթյա Հովհաննես Լազարյանը վարակվում է համաճարակով և հանկարծամահ լինում: Դա 1879 թ. օգոստոսի 14-ն էր, երբ դեռ նոր էր բոլորել փառապանծ գեներալի 59-րդ տարին: Հովհաննես Լազարյանի դին տեղափոխում են Թիֆլիս, որտեղ էլ հայկական Ս. Մարիամ եկեղեցում կատարվում է նրա հոգեհանգստի արարողությունը: Հովհաննես Լազարյանը թաղվեց հայկական Վանք եկեղեցու բակում. նրա հուղարկավորությանը ներկա էր ողջ Թիֆլիսը. «Մարմարյա գրանիտի վրա համառոտ արձանագրում է. Գեներալ-ադյուտանտ Հովհաննես Դավթի Լազարև. 1820–1879: Գրանիտը կկանգնի դարերով, սակայն նրանից առավել ամուր է կենդանի խոսքը, որը սերունդներին պետք է հասցնի այս փառապանծ զորապետի, քաղաքացու և կառավարչի փայլուն և հերոսական գործերը: Նման մարդիկ արժանի են ունենալու իրենց կենսագրությունը և չի կարելի չափսոսալ, որ այդ մասին քչերը գիտեն»[12]: Կարծում ենք՝ այս խոսքերը լիովին բավական են ավարտի համար, սակայն մեկուկեսդարյա հեռավորությունը նույնիսկ չի փոխում մեր նույն մտահոգությունը...

[12] Братская помощь пострадавшим в Турции армянам, с. 296.